առաջադրում է հետևեալ նշանաբանները. «1. վճռական պայքար Անտանտի դէմ. 2. վճռական պայքար այն ներքին ուժերի դէմ, որոնց վրա յենւում է նա — դաշնակ կառավարութեան և արտասահմանեան հայ բուրժուազիայի ագէնտների. 3. անխնայ վարկաբեկումն ցարական և բուրժուական Ռուսաստանի և 4. որպէս դրական հակադիր այդ բացասական լոզունգների՝ միջազգային յեղափոխական պրոլետարիատի կոմունիստական պայքարի ու բանւորա–գիւղացիական Ռուսաստանի բարոյական հմայքի բարձրացումը և խորհրդային հանրապետութեան հաստատումը Հայաստանում»:

«1920 թւի յունւարի երկրորդ կէսին Երևանում տեղի ունեցած կուսակցական անլեգալ կոնֆերենցիան, հիմնւելով կուսակցութեան քառամսեայ փորձառութեան վրա, ամբողջապէս ընդունեց և հաստատեց այդ վարքագիծը: Տարաձայնութիւնը վերաբերւում էր միայն այն հարցին, թէ կուսակցութիւնը մասնակցելո՞ւ է բոլոր հասարակական հաստատութիւնների գործառնութեանը, օրինակ՝ զեմստւոների, թէ՞ միայն դասակարգային հիմնարկութիւնների՝ պրոֆմիութիւնների և գիւղացիական միութիւնների»:

«... Ալեքսանդրապոլի կազմակերպութիւնը, որ գլխաւորապէս բաղկացած էր համարեա բացառապէս Բաղուից ու Թիֆլիսից եկած երկաթուղային բանւորներից, իր ներկայացուցիչների բերանով հարց էր յարուցել իշխանութիւնը վերցնելու մասին, բայց կոնֆերենցիան կտրականապէս մերժեց այդ», որովհետև «կոնֆերենցիան կանգնեց այն տեսակէտի վրա, թէ որքան էլ հեշտ լինի բլանկիստական հարւածով գրաւել իշխանութիւնը ինքնուրոյնաբար և մեկուսացած, այնուամենայնիւ իշխանութիւնը ձեռքում պահելը անկարելի պիտի լինի՝ այն հասարակ պատճառով, որ 1) կուսակցութիւնը, բաղկացած լինելով ո՛չ աւելի քան 500 անդամից, չափազանց աղքատ լինելով փորձած ու պատրաստ ուժերով, չպիտի կարողանայ ո՛չ միայն դիմադրել այն ժամանակւայ քաղաքական և հոգեբանական սիտուացիայում անխուսափելիօրէն առաջ դալիք քաղաքացիական կուին, այլ և իշխանութիւն կազմակերպել կենտրոնում և տեղերում. 2) որ նա հնարաւորութիւն չպիտի ունենայ կազմակերպելու այնպիսի բանակ, որը կարողանայ, առանց «դրսի» օգնութեան, դիմադրել արտաքին թշնամիների — մենշեւիկեան Վրաստանի, մուսաւաթական Ադրբէջանի և քէմալական Տաճկաստանի ամենաթեթեւ արշաւանքին անդամ. 3) որ ծայր աստիճան քայքայւած և սովի ճիրաններում դալարւող երկրի ցուրտն ու քաղցը մի կողմից, իսկ տնտեսական անխուսափելի բլոկադան միւս կողմից՝ հէնց սաղմի մէջ պիտի խեղդեն խորհրդային իշխանութիւնը»:

«Կացութիւնը, բացատրում է Կասեանը, պահանջում էր գրաղւել ո՛չ թէ այդ տհաս մտքով, այլ կուսակցական կազմակերպութիւնների և սրանց ազդեցութեան ու նշանաբանների տարածմամբ ու խորացմամբ, արհեստակցական և գիւղացիական միութիւնների միջոցով ինքնատ մասսաների քաղաքական դաստիարակութեամբ՝ դարթեցնելով նրանց մէջ ինքնագործունէութեան և ինքնիշխանութեան ձգտումն: Այդպիսով, պատրաստ լինել իշխանութիւնը գրաւելու, երբ նեցուկ կունենանք մի հարւան երկիր, որով հնարաւոր կը լինի կապւել բանւորա–գիւղացիական Ռուսաստանի հետ: Միայն երկու դէպքի համար էր կոնֆերենցիան առաջադրել անպայմանօրէն բարձրացնելու ապստամբութեան դրօշը և ընդհանուր ճակատ ստեղծելու՝ ինչ գնով էլ ուղում է լինի. նախ՝ եթէ դաշնակ կառավարութիւնը յանդգնութիւն ունենայ անտանտի թելադրանքով և մենշեւիկեան Վրաստանի հետ միասին օգնել մուսաւաթական կառավարութեանը՝ խոչընդոտ հանդիսանալու կարմիր բանակին՝ Բաղուն հարկադրանօք գրաւելու դէպքում. երկրորդ՝